



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

iAN TV-ի կայքից օգտվելուց առաջ խնդրում ենք մանրամասն կարդալ Ընդհանուր դրույթները և պայմանները: Դրանք կարգավորում են կայքից օգտվելու կանոնները և ծառայության մատուցման հետ կապված փոխհարաբերությունները: Մուտք գործելով և պարբերաբար օգտվելով մեր կայքից՝ Դուք հաստատում եք, որ ընդունում եք ստորև ներկայացված Ընդհանուր դրույթները և պայմանները.

- Կայքի բովանդակության, ինչպես նաև iAN TV-ի ծառայության վերաբերյալ տեղեկատվական և գովազդային նյութերի նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է iAN TV-ին կամ iAN TV-ի հետ համագործակցող երրորդ անձանց: Կայքի բովանդակությունը և տեղեկատվական (գովազդային) նյութերը չեն կարող որևէ կերպ վերարտադրվել կամ տարածվել՝ առանց մեր կողմից նախնական գրավոր թույլտվության: Դուք համաձայնում եք, որ կայքում ներկայացված կամ կայքի միջոցով տրամադրվող նյութերը նախատեսված են Ձեր անձնական օգտագործման համար և չեն կարող օգտագործվել առևտրային նպատակով:
- iAN TV-ի կայքում ծառայության փաթեթներից որևէ մեկին բաժանորդագրվելուց հետո Դուք, որպես բաժանորդ, պարբերաբար կստանաք նամակներ iAN TV-ից: Նամակները նախատեսված են նոր ակցիաների, ծառայության հետ կապված նորությունների մասին տեղեկացնելու համար: Դուք կարող եք ցանկության դեպքում հրաժարվել այդ նամակների ստացումից: Դրա համար անհրաժեշտ է համապատասխան հարցումն ուղարկել support@iantv.tv էլ. հասցեով: Ձեր դիմումի հիման վրա մենք կիրականացնենք համապատասխան փոփոխությունները, որից հետո միակ նամակը, որը Դուք կստանաք, կլինի պատվերի հաստատման նամակը:
- Ծառայության փաթեթներից կամ առաջարկվող սարքերից որևէ մեկը պատվիրելուց և դրա դիմաց վճարում կատարելուց հետո Ձեր էլ.հասցեին կուղարկվի պատվերը հաստատող նամակ, որտեղ նշված կլինեն պատվերի մանրամասները և Ձեր անհատական տվյալները:
- Մենք իրավունք ունենք միակողմանի փոփոխել ծառայության փաթեթների և սարքերի համար սահմանված գները՝ առանց դրա մասին նախապես տեղեկացնելու: Ձեր կողմից վճարումները կատարվում են պատվերը ներկայացնելու պահին գործող գներով:

- iAN TV-ն մշակել է պարբերական վճարումների համակարգ, որը նախատեսված է բաժանորդագրության դիմաց վճարումները կարգավորելու համար: Պարբերական վճարումների համակարգը հնարավորություն է տալիս բաժանորդներին iAN TV ծառայության բաժանորդագրության վճարումներն իրականացնել ավտոմատ կերպով և հստակ ժամանակահատվածի կտրվածքով: Առաջին անգամ բաժանորդագրվելով iAN TV-ի ծառայությանը՝ Դուք Ձեր համաձայնություն եք տալիս պարբերական վճարումների համակարգին՝ քանի դեռ պարբերական վճարումները Ձեր կողմից չեղյալ չեն համարվել: Պարբերական վճարումների ծառայությունից Դուք կարող եք հրաժարվել ցանկացած պահի: Ձեր Անձնական հաշվի «Պարբերական վճարումներ» բաժնում հասանելի է պարբերական վճարումների ծառայությունը չեղարկելու ֆունկցիան:
- Դուք հավաստում եք, որ ըստ անհրաժեշտության Ձեր կողմից մեզ տրամադրված տվյալները ճշգրիտ և ամբողջական են: Միայն կամ թերի լրացված տվյալների համար պատասխանատվությունը ամբողջությամբ կրում եք Դուք: Խնդրում ենք՝ պահանջվող տվյալները լրացնելուց հետո անպայման ստուգեք դրանք:
- Մենք պատասխանատվություն չենք կրում մեր պարտավորությունները չկատարելու կամ հետաձգված կատարելու համար, եթե դա պայմանավորված է մեր վերահսկողությունից դուրս գտնվող պատճառներով:
- Ձեր համակարգչից (սմարթֆոն, պլանշետ) օգտվող անձանց կողմից մեր կայքի օգտագործման համար պատասխանատվությունն ամբողջությամբ կրում եք Դուք և պետք է համապատասխանաբար երաշխավորեք, որ տվյալ անձը հետևում է կայքի օգտագործման Ընդհանուր դրույթներին ու պայմաններին:
- Կայքը կիրառում է Cookie ֆայլեր: Դրանք տեղեկություններ են, որոնք կայքը գրանցում է Ձեր համակարգչի կոշտ սկավառակի վրա: Cookie ֆայլերը հնարավորություն են տալիս այցելուներին ուսումնասիրելու կայքը և թույլ են տալիս համապատասխանեցնել կայքը այցելուների պահանջներին: Cookie ֆայլերն օգնում են կազմել կայքի օգտագործման ընդհանուր վիճակագրությունը: Այս գործիքը չի բացահայտում Ձեր ինքնությունը և չի օգտագործում որևէ ֆայլ Ձեր համակարգչից:
- Կայքի բովանդակությունը կարող է ցանկացած ժամանակ փոփոխվել՝ առանց համապատասխան ծանուցման: Խնդրում ենք փոփոխություններին ծանոթանալու համար պարբերաբար վերանայել մեր կայքի օգտագործման Ընդհանուր դրույթներն ու պայմանները: Ձեր կողմից մեր կայք շարունակական մուտքը կդիտարկվի որպես Ձեր կողմից փոփոխությունների ընդունում: